12061

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«30» 08 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0129-22

Ձեռնարկողը՝ ***«ԱՄ ԱՐՏ ՇԻՆ» ՍՊԸ***
ք. Երևան, Պռոշյան 2/1 փ., 18 փարածք

Գործունեությունը՝ ***Թեժասարի հանքավայրի Թեժագետ տեղամասի նեֆելինային սիենիտների պաշարների վերագնահատման անհրաժեշտ ուսումնասիրության 2022-2025թթ. ծրագրով նախատեսված երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ N 0129-22

<30> 08 2022թ.

Կոտայքի մարզի Թեժասարի հանքավայրի Թեժագետ տեղամասի նեֆելինային սիենիտների պաշարների վերագնահատմանն անհրաժեշտ ուսումնասիրության 2022-2025թթ. ծրագրով նախատեսված երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ԱՄ ԱՐՏ ՇԻՆ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Մեղրաձոր բնակավայր

Ներածական մաս. «ԱՄ ԱՐՏ ՇԻՆ» ՍՊ ընկերությունը նախաձեռնում է իրականացնել երկրաբանահետախուզական աշխատանքներ Կոտայքի մարզի Թեժասարի Նեֆելինային սիենիտների հանքավայրի Թեժագետ տեղամասում: Հայցվող տարածքը գտնվում է Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի վարչական տարածքում: Թեժագետի տեղամասը Մեղրաձոր գյուղի հետ կապված է 7կմ երկարության ավտոճանապարհով: Հրազդան քաղաքի հետ 26կմ երկարությամբ ասֆալտապատ և գրունտային ճանապարհներով: Մոտակա գյուղերն են Մեղրաձորը, որը գտնվում է հայցվող տարածքից մոտ 6կմ հարավարևելք, Փյունիկ գյուղը՝ 5կմ հարավ, Արտավազ գյուղը՝ մոտ 5կմ հարավ-արևմուտք և Կորչլու գյուղը 6.5կմ:

Հայցվող տարածքի հողամասի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը այլ հողատեսքի և արոտավայրի:

Նախատեսվող գործունեությունը, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի ա) ենթակետի:

Նկարագրական մաս. 2021-2025թթ. ծրագրով նախատեսվող երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակն է նախորդ տարիների աշխատանքի արդյունքները հաշվի առնելով

կազմել լրացուցիչ աշխատանքների նոր մեթոդիկա, ելնելով հանքարդյունաբերությունում ժամանակակից տեխնիկայի, հումքի, հանույթի և վերամշակման տեխնոլոգիայի կիրառման հնարավորություններից, ստանալ բոլոր անհրաժեշտ տվյալները տեղամասի պաշարների վերահաշվարկման ու նոր ընդերքաբանական եզրակացության այն ներկայացնելու համար:

Հայցվող 91.74 հա մակերեսով տարածքը եզրագծվում է հետևյալ կոորդինատներով՝ ARM WGS -84(ARMREF02) համակարգով:

Հ/h	X	Y
1.	8467748.4635	4502538.3530
2.	8467569.3478	4502578.1250
3.	8467522.6613	4502727.3470
4.	8467611.5636	4502991.8175
5.	8467777.4322	4503076.8863
6.	8467890.1955	4503229.1986
7.	8468089.8401	4503296.9917
8.	8468209.7187	4503513.6715
9.	8468533.3800	4503690.5504
10.	8468755.3162	4503706.6939
11	8468865.3822	4503563.8629
12	8468715.1657	4503394.2921
13	8467263.0344	4502413.9098
14	8467138.1340	4502304.7672
15	8466585.3945	4502609.1484
16	8466000.8706	4502591.3616
17	8465963.7525	4502625.4482
18	8466033.8111	4502959.6270
19	8466635.6698	4502832.5799
20	8467078.1119	4502544.5958
21	8467180.2874	4502611.8820

Լրացուցիչ հետախուզման և հետազոտությունների արդյունքներով կկազմվի 1:2000 մասշտաբի երկրաբանական նոր քարտեզ՝ ընդգրկելով միայն Թեժագետի տեղամասը: Նախատեսվում են ամբողջությամբ վերականգնել տեղամասում 1950-ական թվականների վերջում անցած բոլոր մագիստրալային հետախուզումները՝ ընդհանուր 3140 գծամետր ծավալով և 19 շուրֆերը: Նախատեսվում է նոր 15 շուրֆերի անցում, ինչպես նաև 2010գծ.մ. հորատանցքերի հորատում: Նախատեսվում է նաև տեղամասի տարբեր երկուական տեղամասերից անցնել ոչ մեծ երկարության խարաններ/յուրաքանչյուրը 5.0մ երկարության և 2.0x4.5մ մակերեսով/ փորձնական հանույթի միջոցով ստանալ 500տ հանքանյութ, տեխնոլոգիական նմուշին անհրաժեշտ նյութեղեն հումք ստանալու համար:

Մակերևույթից անցած լեռնային այս փորվածքների վերականգման համար անհրաժեշտ կլինի դուրս հանելու շուրֆ լցված ապարը, հասնելու փորվածքի հատակին՝ արմատական ապարին, մաքրելու շուրֆի կողային պատերը:

Բոլոր շուրֆերը կրկին կփաստագրվեն, իսկ մի մասը նաև կֆոտոնկարահանվեն, փորվածքները կրկին կնմուշարկվեն, արդյունքներն անցկացնելով նմուշարկման պլաններ: Նմուշարկման արդյունքները ստանալուց հետո շուրֆերից հանած ապարները ետ կլցվեն հորեր:

Հորատման աշխատանքների իրականացման համար ընտրվել է սյունակային հորատում: Հորատանցքերի անցումը հանուկի ստացումով:

Հորատանցքերի հորատման հիմնական տրամագիծն ընտրվել է HQ (95.6մմ) կեռնի հանույթի 61.5մմ տրամագծի ապահովումով: NQ(75.4մմ) տրամագծի հորատում կիրականացվի ջարդոտված գոտիներով, կամ ինտենսիվ ճեղքավորումներով երկրաբանական բարդություններով միջանցքերը հորատելուց: Հորատման գործընթացում որպես լվացող լուծույթ կօգտագործվի ջուր:

Ծրագրում ընդգրկված բոլոր վեց հետախուզագծերի վրա նախատեսվում է հորատել 10 հորատանցքեր (N10—ից N19) ընդհանուր խորությունը 2010գծ.մ:

Հորատման հաստոցի տեղակայման համար կբացվի հորատահրապարակ 10մx10մ չափերով, իսկ որպես դրանց մոտեցման ճանապարհներ կօգտագործվեն նախկինում անցած ճանապարհները, այն մաքրելուց հետո:

Թեժագետի նեֆելինային սիենիտների տեղամասում նախատեսվող մակերևույթից անցած վերականգնվող և նոր անցկացվելիք լեռնային փորվածքներից, հորատումից ստացված կեռնից կվերցվեն նմուշներ, կկատարվի դրանց մշակումներ մանրեցման միջոցով, ինչպես նաև քիմիական անալիզներ, կիրականացվի անհրաժեշտ հսկողական, վերլուծական աշխատանքներ:

Քիմիական նմուշարկման է ենթարկվելու հորատվելիք բոլոր տասը հորատանցքերից ստացված կեռնի 100%-ը: Ընդամենը՝ 503 կեռնային նմուշներ:

Մակերևույթից անցած նախկին փորվածքներից, մաքրումից վերականգնված (հետախուզաառուներից ու շուրֆերից՝ ինչպես նաև մակերևույթից նոր անցած շուրֆերից) կկատարվեն ակոսային նմուշարկում, ընդամենը 819 նմուշ:

Նախատեսվում է հետազոտման ենթարկել 18 մենաքարային և 3 համախառը նմուշ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներն ավարտելուց հետո կիրականացվի ռեկուլտիվացիա, հողային աշխատանքների ծավալը կկազմի 1842.5խմ, տարածքի մակերեսը՝ 2341քմ: Ռեկուլտիվացիայի ընդհանուր գումարը կկազմի 5527500 ՀՀ դրամ:

Ըստ հայտում ներկայացված տեղեկատվության, անմիջապես երևակման տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ, ինչպես նաև դրանց աճելավայրեր, կամ ապրելավայրեր չեն արձանագրվել: Տեղամասը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի և պատմամշակութային հուշարձանի սահմաններում:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

-Տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը կատարվելու է մոտակա բնակավայրերում: Դա կբացառի երևակման տարածքի աղտոտումը նավթամթերքներով:

- Օգտագործված տեխնիկական յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման, կամ երկրորդական վերամշակման համար: Վերամշակող ընկերության հետ պայմանագիրը կկնքվի ընդերքօգտագործման թույլտվությունը ստանալուց հետո:

- Կենցաղային աղբի հավաքում հատուկ պարկերի մեջ և հետագա տեղափոխում մոտակա աղբահավաք կետեր, որտեղից պարբերաբար Կոմունալ ծառայության կողմից տեղափոխում շրջանի աղբավայր:
- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում, տեխնիկայի շահագործում միայն սարքին, նորմատիվային վիճակում:
- Փոշենստեցման նպատակով ջրցանում երևակման տարածքին մոտեցնող ճանապարհների երկայնքով: Ջրառը նախատեսվում է իրականացնել Թեժ գետից:
- Կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը աշխատանքների ավարտից հետո կդատարկվի հատուկ ծառայության ուժերով:
- Առաջնորդվել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:
- Հրդեհային անվտանգության կանոնների պահպանություն, տարածքում հրշիջման միջոցների առկայություն (բահեր, ավազ, տեխնիկական ջուր, կրակմարիչ):

Երևակման տարածքում ընկերությունը երկրաբանական ուսումնասիրության ընթացքում իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

-Աշխատանքների ընթացքում մթնոլորտային օդում փոշու և ծխագազերի մոնիթորինգ, յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ հաճախականությամբ:
- Նավթամթերքներով երևակման տարածքի հողերի աղտոտվածության մշտադիտարկում, տարեկան մեկ անգամ:

Մշտադիտարկումների համար նախատեսվում է տարեկան 100000 ՀՀ դրամ, իսկ բնապահպանական միջոցառումների համար՝ 150000 ՀՀ դրամ:

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Կոտայքի մարզի Թեժասարի հանքավայրի Թեժագետ տեղամասի նեֆելինային սիենիտների պաշարների վերագնահատմանն անհրաժեշտ ուսումնասիրության 2022-2025թթ. ծրագրով նախատեսված երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներով: Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Կոտայքի մարզպետարանը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որոնց կողմից ստացված կարծիքները ևս հաշվի են առնվել:

Նախնական գնահատման հայտի վերաբերյալ, Օրենքով սահմանված կարգով, օգոստոսի 11-ին, Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի վարչական շրջանի ղեկավարի նստավայրում իրականացվել է հանրային քննարկում, որտեղ մեծ թվով բնակիչներ արտահայտել են իրենց դժգոհությունները նախատեսված գործունեության վերաբերյալ:

Հիմնական մտահոգությունն ու պատճառաբանությունն այն էր, որ հետագայում հանքավայրի արդյունահանման աշխատանքները կարող են ավելացնել բնապահպանական խնդիրները, որոնք պայմանավորված են հետագա աշխատանքների ազդեցություններով /փոշու

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

առաջացում, ջրային ռեսուրսների աղտոտում/, տարածքում աշխատանքների միջամտությունների արդյունքում հնարավոր ուրանի հետ կապված ազդեցություններով:
Նախնական գնահատման հայտում չի ներկայացվել Թեժասարի երկրաբանահետախուզական աշխատանքների տարածքում ուրանի և ռադիոակտիվ էլեմենտների պարունակության վերաբերյալ տեղեկատվություն, ինչը նույնպես հանրային քննարկման ընթացքում բարձրաձայնվեց:
Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքը օգոստոսի 11-ի գրությամբ ներկայացրել է բացասական կարծիք նախատեսվող գործունեության վերաբերյալ:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԱՄ ԱՐՏ ՇԻՆ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Կոտայքի մարզի Թեժասարի հանքավայրի Թեժագետ տեղամասի նեֆելինային սիենիտների պաշարների վերագնահատմանն անհրաժեշտ ուսումնասիրության 2022-2025թթ. ծրագրով նախատեսված երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Գոհար Մինասյան